

Ապրում եյին մի գյուղում ծերուկըն ու իր պառապը: Ունեյին նրանք յերեք վորդի: Ապրում եյին շատ աղքատ:

Տեսնում է ծերուկը, վոր ամբողջ ընտանիքով պիտի սովամահ լինեն: Ի՞նչ անել:

Ծերուկը, յերբ դեռ յերիտասարդ էր, լսել էր մի սքանչելի հեքիաթ, թե իբր մի ժամանակ յերջանկությունը բաժանում էին մարդկանց մեջ: Այդ յերջանկությունից բաժին չհասավ այն առաջին չուգաչին, վորից առաջացավ չուգաչ ժողովուրդը, վորովհետև նա ուշացել էր, տրեխներն էր հագնում:

Յե՛վ վորոշեց ծերուկն իր յերեք վորդիներին ուղարկել յերեք ճանապարհներով՝ յերջանկություն վորոշելու:

Վորդիներից ամենափոքրի անունն էր Ենդրի:

Գնաց նա, քայլեց իր ճամբով, հասավ այն տեղը, ուր ճամբան յերկու մասի յեր բաժանվում: Այդտեղ կար մի սյուն, վորի վրա գրված էր, «Ա՛յ գնաս՝ արջի մոտ կընկնես, ձախ գնաս՝ արծվին կհանդիպես»:

Յերկար մտածեց Ենդրին, թե



## ՉՈՒՎ ԱՃՈՒԿԱՆ ՀԵՔԻԱԹ

վոր ճամբով գնա: Վորոշեց գնալ դեպի ձախ:

Գնաց, գնաց ու յերկրորդ որը հասավ անտառի յեղերքը, տեսավ չողջողուն արեգակը, իսկ արեգակի վրա արծիվն էր նստած:

— Ո՛ւր ես գնում, Ենդրի, — հարցրեց արծիվը նրան:

— Գնում եմ յերջանկություն վորոշելու, ել ուժ չկա սով ու կարեքի մեջ մնալու:

Կանչեց արծիվն Ենդրիին իր մոտ և ասաց.

— Յերջանկությունը ճամբի միջում ընկած չէ. յերջանկությունն ձեռք բերելու համար կարողությունն է հարկավոր: Ահա վերցրու այս մահակը և հետ դարձիր: Ծանաղարհին քեզ կհանդիպի արջը: Խփիր այս մահակով արջին, ճեղքիր նրա փորը, և նրա փորից կընկնի մի վոսկե տուփիկ: Թե կարողանաս այդ տուփը բանալ — կգտնես յերջանկությունը:

Լսեց Ենդրին արծիվն, սպանեց արջին, ձեռք բերեց տուփը, բացեց, և տուփի միջից դուրս պրծան խող ու վոշխար:

Գնում է Ենդրին տուն և ուրախությամբ մտածում է — գտա յեսիմ յերջանկությունը: Ապրեց Ենդրին գյուղում մի քիչ և տեսավ, վոր թեև ապրելը շատ հեշտ է դարձել, սակայն մինչև յերջանկություն — մե՛կ, վորքան հեռու յե՛ւ:

Վորոշեց նորից գնալ յերջանկություն վորոշելու: Պատահեց դարձյալ արծիվն, իսկ արծիվը հարցրեց.

— Ո՛ւր ես գնում նորից, Ենդրի, բարեկամս:

Ենդրին ամեն բան պատմեց նրան: — Ի՛սկ, — ասաց արծիվը, — ահա քեզ մահակ, յետ գնա յեկածդ ճամբով, կհանդիպես այսին: Սպանիր նրան, փորը պատուիր և մի փոքրիկ տուփ կգտնես այնտեղ: Բաց արա տուփը և կգտնես քո յերջանկությունը:

Այդպես ել արեց Ենդրին, ինչպես

արծիվն էր ասել: Բացեց նա տուփը և դուրս պրծան տուփից մի ձուկ և մի ձի:

«Ահա վերջապես յերջանկությունը» — մտածեց Ենդրին և վաղեց դեպի տուն:

Ապրեց նա գյուղում մի փոքր և տեսավ, վոր կյանքն անհամեմատ հեշտ է դարձել, բայց այնուամենայնիվ յերջանկությունը հեռու յեղեռ: Վորոշեց նորից գնալ յերջանկություն վորոշելու:

Պատահեց նա արծիվն և պատմեց նրան, թե ինչպես այնուամենայնիվ դժվար է ապրելը:

— Ի՛սկ, — ասաց արծիվը, — նորից հետ գնա յեկածդ ճամբով, կհանդիպես աղվեսին: Սպանիր նրան և այնտեղ, վորտեղ կվոշնչացրես նրան, կգտնես քո յերջանկությունը:

Այդպես ել արեց Ենդրին: Հենց իրենց գյուղի մոտ նա հանդիպեց աղվեսին, սպանեց նրան և յերբ նա յեց իրենց գյուղին՝ չճանաչեց: Ի՛յն յին ծանոթ գյուղի փոխարեն մի նոր, կարմամահարաչ գյուղ էր փրված իր առջև, լավ ու գեղեցիկ շինություններով, հատիկով լեցուն ամբարներով, ձիերով ու կովերով լցված գոմերով, իսկ այդ գյուղի գլխավոր շենքի ճակատին գրված էր մի հնչուն բառ՝ «Կոլխոզ»:

Այդպիսով, չբավոր չուգաչ Ենդրին, սպանելով արջ-ցարին, գայլ-կալվածատիրոջ և աղվես-կուլակին, իր յերջանկությունը գտավ վերջապես:

Իսկ աղքատ չուգաչին ճանապարհցույց տվող արծիվ անունն էր — Ստալին:

## ԱՆՄԱՐ

ՈՒՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՆ ՎՐԱԴ,  
ԴՈՒ ԳԱՀՊԱՆԻՐ ԲԵՉ ՄԵՉ ՀԱՄԱՐ,  
ՄԵՐ ՄԻՐԵԼԻՆ, ԱԳՐԻՐ ԱՆՄԱՐ:

Կազմիստամի ԺԻՐՇԻ (ժողովրդական լեռնի) ԿԱՅԻՑԻՆԻ ԼԵՐՈՒՆ:



ԱՎԵԼԻ  
ԲԱՅՑ  
Ս  
Վա  
հե  
լե  
ՅԵ  
Լեզր  
աշխ  
բարգ  
բնի  
ԵԿԱ  
ՊԵՐ  
ԱԶ  
ՈՂ  
ԱՏ